ARMENIAN ★★★★★★★★★★★★★★★★★★★★★

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՆԱՀԱՆԳԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դատաքննությանը ձեզանից բացի ներկա կլինեն շրջանի ներկայացուցիչը և Վարչական դատավորը (ALJ)՝ Կալիֆորնիայի սոցիալական ծառայության բաժնից: Սա բաց դատավարություն չէ, և կողմնակի անձանց մուտքն արգելված է:

Դատաքննությանը դուք իրավունք ունեք հայտնելու Դատավորին շրջանի հետ ունեցած ձեր անհամաձայնությունների մասին: Շրջանի ներկայացուցիչն իր հերթին կբացատրի՝ ինչու են ձեր նկատմամբ միջոցներ ձեռնարկվել, և կփորձի հիմնավորել այդ միջոցները: Դուք և շրջանի ներկայացուցիչը հնարավորություն կստանաք հարցեր հղելու միմյանց և ներկա գտնվող վկաներին: Դատավորը նույնպես կարող է հարցերուղղել՝ բոլոր փաստերը պարզելու համար:

Դատաքննությանը կարող եք բերել ցանկացած գրառումներ՝ հիմնավորելու կամ վիճարկելու այն փաստերը, որոնց շուրջ դուք և շրջանի ներկայացուցիչը չեք եկել համաձայնության: Դուք կարող եք նաև ներկայացնել գրավոր դիմում՝ ձեր դիրքորոշման շարադրությամբ:

Դատաքննությանը շրջանը կներկայացնի մեքենագրված Դիմում՝ նկարագրելով և հիմնավորելով ձեր նկատմամբ ձեռնարկված միջոցները: Դիմումը կարող եք ստանալ դատաքննությանը նախորդող երկու օրերի ընթացքում՝ աշխատանքային ժամերին: Նախքան Դիմումի համար ներկայանալը՝ դուք պետք է զանգահարեք ձեր շրջանի բողոքարկումների բաժին և համոզվեք, որ փաստաթղթերը պատրաստ են: Եթե Դիմումը դեռևս պատրաստ չէ կամ եթե շրջանը դրանում զգալի փոփոխություններ է կատարել, ապա դուք իրավունք ունեք պահանջելու, որպեսզի դատաքննությունը հետաձգվի:

Դուք իրավունք ունեք դատաքննությունից առաջ ծանոթանալու ձեր գործին առնչվող
նյութերին և օրենքներին: Անհրաժեշտության դեպքում անգլերեն լեզվով ներկայացված
նյութերին ծանոթանալու գործում ձեզ կաջակցի թարգմանիչը:

Դուք իրավունք ունեք ինքներդ ներկայանալու դատաքննությանը կամ ձեր փոխարեն
առաջարկելու այլ անձի: Եթե դատաքննությանը ձեր փոխարեն ներկայանալու է այլ անձ, ապա մինչև դատաքննության օրը լրացրեք և Նահանգի դատաքննությունների բաժին ուղարկել կցված DPA 19 ձևը: Եթե դատաքննության օրը ձեր կողմից չներկայանա ոչ ոք, ապա դուք պարտավոր եք պատշաճ կերպով բացատրելու չներկայանալու պատճառը և խնդրելու, որպեսզի նշանակված օրվան հաջորդող տասը օրերի ընթացքում սկսվի նոր դատաքննություն:

Եթե դուք դատաքննությունից առաջ տեղեկացրել եք ՆԴԲ-ին, որ թարգմանչի կարիք ունեք, ապա դատաքննությանը ներկա կլինի թարգմանիչ, որը կաջակցի ձեզ և դատաքննության մյուս մասնակիցներին:

Հնարավոր են ուշացումներ, որոնց հետևանքով ձեր դատաքննությունը ուշ կսկսվի: Բացի այդ, դատաքննության վայրում չկան երեխաների խնամքի միջոցներ:

Եթե դատաքննություն պահանջելուց հետո դուք տեղափոխվել եք նոր բնակավայր, անհրաժեշտ է հայտնել ՆԴԲ-ին ձեր նոր հասցեն՝ զանգահարելով **1-800-743-8525** անվճար հեռախոսահամարով (ձայնային/TDD):

Դատաքննության հետաձգում

Եթե դուք կարիք ունեք հետաձգելու դատաքննությունը, ապա պետք է մինչև դատաքննությունը զանգահարեք ՆԴԲ վերը նշված անվճար հեռախոսահամարով և պատշաճ կերպով հիմնավորեք ձեր ցանկությունը: Կարիք չկա հիմնավորելու առաջին հետաձգումը սննդի կտրոնների համար: Եթե խնդրանքը բավարարվի, ապա դատաքննությունը կհետաձգվի, իսկ ընթացիկ օգնությունը կշարունակվի:

Դատաքննություն տանը/հեռախոսով

Եթե դուք ի վիճակի չեք ներկայանալու դատաքննությանը վատառողջ կամ անգործունակ լինելու պատճառով, ապա դատաքննությունը կարող է անցկացվել ձեր տանը կամ հեռախոսով: Դատաքննությունը տանը անցկացնելու համար կարող է պահանջվել բժշկական հաստատում: Տանը կամ հեռախոսով դատաքննություն անցկացնելու պահանջով կարող եք դիմել ՆԴԲ սույն փաստաթղթի վերջում նշված հասցեներից մեկով, որն առավել մոտ է ձեր բնակության հասցեին կամ **1-800-743-8525** անվճար հեռախոսահամարով (ձայնային/TDD)՝ դատաքննության համար նշանակված օրվանից առնվազն 10 առաջ:

Եթե դուք այլևս Կալիֆորնիա նահանգի քաղաքացի չեք, ապա ձեզ համար կկազմակերպվի հեռախոսով դատաքննություն: Դատաքննությունից առաջ ձեզ կհղվեն համապատասխան ուղղություններ:

Ծանուցագրեր

Եթե ցանկանում եք, որպեսզի դատաքննության ներկա լինեն վկաներ կամ հավելյալ փաստաթղթեր, ապա կարող եք պահանջել ծանուցագրերի թողարկում: Մինչ դատաքննության օրը ծանուցագիր պահանջեք սույն փաստաթղթի վերջում նշված հասցեներից մեկով, որն առավել մոտ է ձեր բնակավայրին: Դատավորը կորոշի, թե արդյո՞ք պետք է թողարկել ծանուցագիր: Ձեր պարտականությունը կլինի ծառայել այն անձին, որին կհղվի ծանուցագիրը, կամ այն անձին, որի հսկողության ներքո են գտնվում դատաքննության համար անհրաժեշտ փաստաթղթերը (բանկ, վարկային միություն, հիվանդանոց և այլն.)

Դատաքննությունից հետո

Դատաքննությունից հետո Դատավորը կհղի առաջարկվող որոշումը Տնօրենին կամ որոշում կընդունի Տնօրենի անունից: Եթե որոշումն առաջարկվի Տնօրենին, ապա նա կարող է դրան համաձայնություն տալ, պահանջել հետագա դատաքննություն կամ ընդունել իր սեփական որոշումը: Եթե Տնօրենն ընդունում է իր սեփական որոշումը, ապա այդ որոշումը վերջնականն է: Այնուամենայնիվ, դուք կստանաք նաև Դատավորի կողմից առաջարկված որոշման պատճեն: Շրջանը պետք է անմիջապես ի կատար ածի ընդունված որոշումը: Եթե այն բացասական է, ապա ցանկացած ընթացիկ օգնություն կդադարեցվի: Բացի այդ, շրջանը կարող է փոխհատուցում պահանջել ընթացիկ կանխիկ օգնության և սննդի կտրոնների դիմաց: Որոշման առաջին էջը կընդգրկի տեղեկություններ բողոքարկման ձեր իրավունքների վերաբերյալ:

Նահանգի դատաքննության գրասենյակներ

- State Hearings Division, 744 P Street, M.S. 19-44, Sacramento, CA 95814 (916-229-4187)
- State Hearings Division, 1515 Clay Street #1203, Oakland, CA 94612 (510-622-4000)
- State Hearings Division, 811 Wilshire Boulevard #1118, Los Angeles, CA 90017 (213-833-2200)
- State Hearings Division, 355 West Grand #4, Escondido, CA 92025 (760-735-5070); or
- State Hearings Division, 2550 Mariposa Mall #3088, Fresno, CA 93721 (559-445-5775).

STATE OF CALIFORNIA
(ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳ)
Arnold Schwarzenegger, Նահանգապետ

HEALTH AND HUMAN SERVICES AGENCY
(ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ)
Kimberly Belshé, Քարտուղար

DEPARTMENT OF SOCIAL SERVICES

PUB 412 (ARMENIAN) (4/04)